Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի թարգմանական մատենաշարի փորձնական ծրագրի մեկնարկը Հայաստանի ամերիկյան համալսարանում

13.06.2017 Երևան, Հայաստան

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Թարգմանչի որակավորման վկայագիր շնորհող ծրագիրը և Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի Հայկական համայնքների բաժինը ուրախությամբ տեղեկացնում են, որ ՀԱՀ-ում կմեկնարկի Գալուստ Կիւլպէնկեան թարգմանական մատենաշարի փորձնական ծրագիրը: Այն ուղղված է աջակցելու Գալուստ Կիւլպէնկեան թարգմանական մատենաշարի իրագործմանը, որի նպատակն է հումանիտար և հասարակական գիտությունների կարևորագույն գրքերը հասանելի դարձնել հայերենով (նախագծի առաջին փուլում թարգմանվելիք գրքերի ցանկին ծանոթանալու համար սեղմեք այստեղ):

Մեկ տարվա տևողությամբ փորձնականը նախատեսված է Թարգմանչի որակավորման վկայագիր շնորհող ծրագրի ուսանողների համար: Այն ուսանողներին բացառիկ հնարավորություն կընձեռի աշխատել Հայաստանի թարգմանչական և հրատարակչական ոլորտներում, կիրառել ակադեմիական գիտելիքներ և ձեռք բերել գործնական փորձ:

Կիւլպէնկեան թարգմանական մատենաշարի փորձնակը կկազմակերպի թարգմանական մատենաշարը համակարգող խորհրդի հանդիպումները, կպահի ընտրված թարգմանիչների հետ կապը, կստեղծի թվային հարթակ, որը կծառայի նոր բառացանկերի ստեղծմանը, կաշխատի հրատարակիչների հետ և կաջակցի գրքերի հրատարակմանը և տարածմանը Հայաստանում: 2017-18 թվականների փորձնական ծրագրի համար առաջադրված ուսանողը Մարգո Գևորգյանն է:

Փորձնական ծրագրի խորհրդատու և ՀԱՀ-ի դասախոս Շուշան Ավագյանը շեշտեց, որ «Փորձնականը հիմնված է Թարգմանչի որակավորման վկայագիր շնորհող ծրագրի շրջանակներում ձեռք բերված գիտելիքների և հմտությունների վրա, և այն ուսանողներին թույլ կտա յուրահատուկ փորձառություն և անգնահատելի մասնագիտական վերապատրաստում ձեռք բերել: Մեր ծրագիրն իդեալական է նման

նախաձեռնության համար, և մենք անչափ ոգևորված ենք Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի հետ համագործակցելու կապակցությամբ»։